« 10 » հունիս 2026թ. No 3327 - Ա

«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2026թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (ՀՀ ԱՆ ԱԱԻ)
ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

- Թիրախային լսարան՝ ավագ և միջին բուժաշխատողներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ մինչև 100 հոգի:
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 5 տեսական և 7 գործնական կրեդիտ. դասավանդողներ Վիգեն Խաչատուրյանին՝ ՇՄԶ 5 տեսական և 7 գործնական կրեդիտ, Վաչիկ Հակոբյան՝ ՇՄԶ 5 տեսական և 7 գործնական կրեդիտ, Արմինե Սանամյանին՝ ՇՄԶ 5 տեսական և 7 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 010235310

Օր 1		
1,5 ժամ	**Դասախոսություն** Ներածական մաս. Արտակարգ իրավիճակների պայմաններում առաջին բուժօգնության կազմակերպում, հիմնական սկզբունքների ներկայացում: ABC, CAB շնչառության և շնչուղիների գնահատում, օտար մարմնի հեռացում շնչուղիներից (Հայմլիկ վարժանք, կոնիկոտոմիա): Արհեստական շնչառություն, ցուցումը: Թոքերի արհեստական արդյունավետ օդափոխություն սարքի միջոցով՝ ցուցումը, կատարման տեխնիկան, ավարտը: CPR (ՍԹՎ): Սրտի արտաքին մերսում: Ցուցումը, կատարման տեխնիկա, սկիզբը և ավարտը, արդյունովետության գնահատում, մեկ կամ երկու հոգով մեծերի և մանկական տուժածների դեպքում:	Վիգեն Խաչատուրյան / Վաչիկ Հակոբյան / Արմինե Սանամյան
2,5 Ժամ	**Գործնական աշխատանք** Մանեկենի վրա ցուցադրել սրտի մերսումը մեկ և երկու կատարողի դեպքում: Ցուցադրել դեֆիբրիլյատորի հնարավորությունները, օգտագործման ցուցումը, տխնիկան, կատարողների անվտանգության ապահովումով (պարզ և մասնագիտացված դեֆիբրիլյատոր): Արհեստական շնչառություն բերան-բերան,բերան-քիթ, մանկական և մեծերի Ամբու պարկ:	Վիգեն Խաչատուրյան / Վաչիկ Հակոբյան / Արմինե Սանամյան

	Թոքերի արհեստական արդյունավետ օդափոխություն սարքի միջոցով՝ ցուցումը, կատարման տեխնիկան, ավարտը:	
Օր 2		
1,5 ժամ	**Դասախոսություն** Անգիտակից վիճակներ, հիպոգլիկեմիկ և հիպերգլիկեմիկ կոմաներ, ուշագնացություն, կոլլապս, ցնցումնային սինդրոմ (հիպերթերմիա, էկլամպսիա և էպիլեպսիա): Գանգուղեղային և ողնաշարի վնասվածքներ, անշարժացում, դուրս բերում և տեղափոխում:	Վիգեն Խաչատուրյան / Վաչիկ Հակոբյան / Արմինե Սանամյան
2,5 ժամ	**Գործնական աշխատանք** Մուլյաժների վրա ցուցադրել անգիտակից տուժածի տեղափոխում պադգարակով և ձեռքի տակ ունեցած միջոցներով: Կենտրիի բեկակալի օգտագործման տեխնիկան:	Վիգեն Խաչատուրյան/ Վաչիկ Հակոբյան / Արմինե Սանամյան
Օր 3		
2 ժամ	**Դասախոսություն** Վերջույթների կոտրվածքներ, կրծքավանդակի և որովայնի վնասվածքներ: «Կռաշ» սինդրոմ: Արյունահոսությունների տեսակը, առաջին բուժօգնություն: Այրվածքներ. էլեկտրական, քիմիական, ճառագայթային և ջերմային: Արտաքին ազդակներ (ցրտահարություն, սառեցում, ջերմահարություն, ջրահեղձում):	Վիգեն Խաչատուրյան / Վաչիկ Հակոբյան / Արմինե Սանամյան
2 ժամ	**Գործնական աշխատանք** Ցուցադրել մանեկենների և մասնակիցների վրա վերջույթների անշարժացման տխնիկան տարբեր տեսակի բեկակալների և ձեռքի տակ ունեցած միջոցներով: Ցուցադրել վիրակապման տեսակները բինտով և ձեռքի տակ ունեցած միջոցներով: Լարանների և տուրնիկետների ցուցադրում, օգտագործման տեխնիկան մուլյաժների և մասնակիցների վրա:	Վիգեն Խաչատուրյան/ Վաչիկ Հակոբյան / Արմինե Սանամյան